

Կ-193-14.01.2013-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության 1995 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-16 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 10-րդ մասից հանել «և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի մշակած Հայաստանի Հանրապետության օրենսդրության առանձնահատկությունների մասին տեղեկատվական ձեռնարկը» բառերը:

Հոդված 2. Օրենքի 29-րդ հոդվածում՝

- 1) 2-րդ մասում «մեկամյա» բառը փոխարինել «վեցամսյա» բառով.
- 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ և 4-րդ մասերով.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումների, միջնորդությունների, դրանց քննարկման ընթացքի, անձի քաղաքացիության վերաբերյալ տվյալները ֆիզիկական անձանց, կազմակերպություններին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև օտարերկրյա պետություններին կարող են փոխանցվել կամ տրամադրվել միայն դիմումատուի կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած անձի համաձայնությամբ կամ օրենքով կամ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում:

Սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված համաձայնությունը ներկայացնելու պարտավորությունը կրում է տվյալներ ստանալու նպատակով հարցմամբ դիմողը:»:

Հոդված 3. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված վեցամսյա ժամկետը գործում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումները քննարկելիս:

Ա Մ Փ Ո Փ Ա Յ Ե Ր Թ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը	Եզրակացություն
ՀՀ կառավարություն	Հոդված 2 Կետ 2	<p>Շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.</p> <p>«2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ և 4-րդ մասերով. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումների, միջնորդությունների, դրանց քննարկման ընթացքի, անձի քաղաքացիության վերաբերյալ տվյալները ֆիզիկական անձանց, կազմակերպություններին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև օտարերկրյա պետություններին կարող են փոխանցվել կամ տրամադրվել միայն դիմումատուի կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած անձի համաձայնությամբ կամ օրենքով կամ միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերում:</p> <p>Սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված համաձայնությունը ներկայացնելու պարտավորությունը կրում է տվյալներ ստանալու նպատակով հարցմամբ դիմողը»:</p>	Առաջարկությունն ընդունվել է: Հոդվածի 2-րդ կետը շարադրվել է առաջարկված խմբագրությամբ:
	Հոդված 3	Հոդվածը վերնագրել՝ «Անցումային դրույթներ»:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 3	Անցումային դրույթներում լրացնել նորմ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մեկամյա ժամկետը կրճատելու մասին դրույթի հետադարձ ուժ չունենալու վերաբերյալ:	Առաջարկությունն ընդունվել է: Օրինագծի 3-րդ հոդվածը լրացվել է նոր 2-րդ մասով՝ նշելով, որ 2-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված վեցամսյա ժամկետը գործում է օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումները քննարկելիս: